21.Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող Վարդենիս քաղաքի Խ. Ստեփանյան փողոց 7/4 հասցեի (ծածկագիր 05-005-0087-0187, սեփականության իրավունքի վկայական 25092024-05-0034) 0,0042հա բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասը օտարել աճուրդ-վաճառքի միջոցով:

22. Մեկնարկային գինը սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ-ի համար 792 (յոթ հարյուր իննսուներկու) ՀՀ դրամ (15-րդ գոտի):

23. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ ինչպես գիտենք ՀՀ Կառավարության կողմից հաստատված սահմանամերձ բնակավայրերում բնակարանաշինության ծրագիրը շարունակվում է, որի շրջանակներում դիմել են շահառուներ՝ հողամաս ձեռք բերելու համար: Առաջարկում են տալ Ձեր համաձայնությունը՝ նախագծում ներկայացված հողամասերը աճուրդ-վաճառքով օտարելու համար, և մեկնարկային գին սահմանել կադաստրային արժեքով՝ 1քմ-ի համար 200 (երկու հարյուր) ՀՀ դրամ (19-րդ գոտի), որով կապահովվի բյուջեի կատարողական մասը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 151-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ <<ԵՎԱ _ՇԻՆ 2009>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՅՈՒՂ ԱԿՈՒՆՔ 1 ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով ՀՀ ընդերքի մասին օրենսգրքով, ՀՀ հարկային օրենսգրքի 229 հոդվածի դրույթներով <<< կառավարության 21 ապրիլ 2001 թվականի>> N 286 որոշման 44-րդ կետի

դրույթներով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 09.07.2021թ. N 1107-Ա հրամանը և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանաձների արդյունահանման N ՇԱԹ -29/727թույլատվությունը, ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության N L-727

լեռնահատկացման ակտը և <<ԵՎԱ -ՇԻՆ 2009>> ՍՊ ընկերության
դիմումը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.<<ԵՎԱ-ՇԻՆ 2009>> ՍՊ ընկերությանը վարձակալությամբ տրամադրել՝ Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող, գյուղ Ակունք 1 հասցեում գտնվող 2,82976 հա մակերեսով (ծածկագիր՝05-008-0232-0015 սեփականության իրավունքի վկայական՝ N 02102024-05-0051) արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության հողատեսքը:

2. Հողամասը վարձակալության տրամադրել 20 տարի ժամկետով մինչև 2044 թվականի հունվարի 29-ը համաձայն << տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության օգտակար հանածոների արդյունահանման N ՇԱԹ -29/727 թույլատվության, 33 տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության N L-727 լեռնահատկացման ակտի:

3. Վարձավճարի գին սահմանել տարեկան մեկ քմ-ի համար գործող կադաստրային արժեքի 8.4%-ի չափով՝ $336,6 \times 8.4\% \times 28297,6 = 800100$ /ութ հարյուր հազար մեկ հարյուր/ << դրամ:

4. <<ԵՎԱ-ՇԻՆ 2009>> ՍՊ ընկերությանը պարտավորեցնել Վարդենիս համայնքում սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում, Վարդենիս համայնքում իրականացնել փողոցների բարեկարգման և խճապատման աշխատանքներ 15 սմ հաստությամբ, տարեկան 600քմ տարածք և <<Եղեմական պարտեզ>> ՀՈԱԿ հաճախող թվով հինգ սոցիալապես անապահով երեխաների ծնողական վճարների փոխհատուցում՝ տարեկան 165000/ մեկ հարյուր վաթսուհինգ հազար/ դրամի չափով:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ

<< տարածքային կառավարման ենթակառուցվածքների նախարարությունը <<ԵՎԱ -ՇԻՆ 2009>> ՍՊ ընկերությանը 2024 թվականի հունվարի 29-ին տվել է օգտակար հանածոների արդյունահանման N ՇԱԹ -29/727 թույլտվություն և N L-727 լեռնահատկացման ակտ, որի համաձայն անհրաժեշտ է կնքել Վարդենիս համայնքի սեփականություն հանդիսացող 05-008-0232-0015 ծածկագրով գյուղ Ակունք 1 հասցեում գտնվող 2,82976 հա մակերեսով արդյունաբերության ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության ընդերքի օգտագործման համար տրամադրված գործառնական նշանակության հողատեսքի վարձակալության պայմանագիր: Միաժամանակ տեղեկացնում եմ, որ դուք արդեն իսկ տվել եք ձեր համաձայնությունը վերոգրյալ հողամասի նպատակային նշանակությունը փոխելու:

Առաջարկում եմ թույլատրել կնքել պայմանագիր և տարեկան վարձավճարի գին սահմանել ութ հարյուր հազար հարյուր դրամ և Վարդենիս համայնքում սոցիալ-տնտեսական զարգացման ոլորտում իրականացնելու փողոցների բարեկարգման, խճապատման աշխատանքներ և <<Եղեմական պարտեզ>> ՀՈԱԿ հաճախող թվով հինգ սոցիալապես անապահով երեխաների ծնողական վճարների փոխհատուցում՝ տարեկան հարյուր վաթսուհինգ հազար դրամի չափով:

Ելույթով Հանդես եկավ ավագանու անդամ Դավիթ Շահնազարյանը առաջարկելով բովանդակության առաջին կետում ավելացնել <<20 տարով>> բառերը:

Այլ առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 150-Ա/

Լսեցին

ԱՄՆ ՄԶԳ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՓՈՔՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ դրույթներ և 13-րդ հոդվածի 10-րդ կետը Վարդենիս համայնքի ավագանին որոշում է.

1. Հավանություն տալ Վարդենիս համայնքի մասնակցությանը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվող փոքր ներդրումային ծրագրին:
2. Համաձայնություն տալ, դրամաշնորհային մրցույթին ներկայացվող երկու ծրագրային հայտ-առաջարկների հաստատման դեպքում, Վարդենիս համայնքի 2024թ. բյուջեից կատարելու ծրագրի ընդհանուր արժեքի 20%-ի չափով համապատասխան համաներդրում:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ Վարդենիս համայնքում ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ Հայաստանի Տարածքային Զարգացման Հիմնադրամի կողմից իրականացվելու է փոքր ներդրումային ծրագիր, որի շրջանակներում նախատեսվում է իրականացնել Կարճադյուր բնակավայրի այգու վերակառուցման և Ակունք բնակավայրի մարզադահլիճի վերանորոգման շինարարական աշխատանքները: Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում 45 միլիոն ՀՀ դրամ: Առաջարկում եմ տալ Ձեր հավանությունը նշված ծրագրին և համաձայնություն տալ կատարելու 20 տոկոսի ներդրում՝ ծրագիրն իրականություն դարձնելու համար:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 149-Ա/

Լսեցին

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ.-Ի "ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ

ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին >> Հայաստանի Հանրապետության օրենքի 18 -րդ հոդվածի 28-րդ կետով, 35-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝ համայնքի ավագանին որոշում է.

1.Վարդենիս համայնքի ավագանու 2024թ. փետրվարի 6-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

1)«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Բանավան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակի 11-րդ տողի բուժքույր <<0,5>> միավորը փոխարինել <<1,0>> միավորով և 19-րդ տողից հետո ավելացնել 0,5 միավոր լվացարար և 0,5 միավոր դռնապահ:

2) <<Վարդենիսի թիվ 1 մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում 12-րդ տողի բուժքույր <<0,75>> միավորը փոխարինել <<1,0>> միավորով

3) <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի 7-րդ տողի տնտեսավար <<0,75>> միավորը փոխարինել <<1,0>> միավորով

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Համայնքի ղեկավարը առաջարկեց Վարդենիս համայնքի ավագանու 2024թ. փետրվարի 6-ի <<ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/՝ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՑՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 6-Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝

«ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս քաղաքի «Բանավան» մանկապարտեզ» ՀՈԱԿ-ի հաստիքացուցակի 11-րդ տողի բուժքույր <<0,5>> միավորը փոխարինել <<1,0>> միավորով և 19-րդ տողից հետո ավելացնել դռնապահ և լվացարար, հաստիքային միավոր սահմանելով 0,5- ական միավոր և հաստատել՝ համաձայն հավելվածի:

Երկրորդ կետով առաջարկում եմ <<Վարդենիսի թիվ 1 մարզադպրոց>> ՀՈԱԿ-ի հաստիքացուցակում կատարել փոփոխություն և 12-րդ տողի բուժքույր <<0,75>> միավորը

փոխարինել <<1,0>> միավորով, իսկ երրորդ կետով <<Վարդենիս քաղաքի թիվ 2 մանկական երաժշտական դպրոց>> ՀՈԱԿ-ի 7-րդ տողի տնտեսվար <<0,75>> միավորը առաջարկում եմ փոխարինել <<1,0>> միավորով և հաստատել՝ համաձայն հավելվածի, որը ներառված է Ձեզ տրամադրված նախագծերում:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 22 կողմ, 0 դեմ, 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 148-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի 2024 թվականի բյուջեի ինն ամիսների կատարողականը՝ համաձայն հավելվածների:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց Վարդենիս համայնքի 2024 թվականի ինն ամիսների կատարողականը:

Եկամտային մաս

2024 թվականի ինն ամիսների եկամուտը կազմել է 4 միլիարդ 430 միլիոն 570 հազար 400 Հ/Դ և պլանի դիմաց փաստացի կատարվել է 2 միլիարդ 720 միլիոն 587 հազար 700 Հ/Դ կամ 61,4 տոկոս:

Սեփական եկամուտների ամրակցված ինն ամսվա պլանը 394 միլիոն 479 հազար 200 Հ/Դ-ից փաստացի կատարվել է 328 միլիոն 18 հազար 700 Հ/Դ կամ 83,2 տոկոս:

Ծախսային Մաս

2024 թ. ինն ամսվա ծախսերը պլանավորված է 4 միլիարդ 537 միլիոն 221 հազար 100 Հ/Դ, որի դիմաց փաստացի կատարվել է 2 միլիարդ 54 միլիոն 513 հազար 600 Հ/Դ:

Վարչական բյուջեի ինն ամսվա ծախսերի պլանը 1 միլիարդ 935 միլիոն 963 հազար Հ/Դ դիմաց փաստացի կատարվել է 1 միլիարդ 227 միլիոն 572 հազար 200 Հ/Դ:

Համայնքի ղեկավարը նշեց, որ կատարողականի վերաբերյալ ավելի մանրամասն կներկայացնի ֆինանսական բաժնի պետը:

Առարկություններ և առաջարկություններ չեղան:

Քվեարկության արդյունքում 13 կողմ 0 դեմ 9 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-9

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 147-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 4-Ն ՈՐՈՇՄԱՄԲ 2024 ԹՎԱԿԱՆԻ
ՀԱՄԱՐ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԲՅՈՒՋԵՌԻՍ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ՍԵՅՐԱՆ ԳՐԻԳՈՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 38-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի դրույթներով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի դրույթներով և հաշվի առնելով Վարդենիս համայնքի ղեկավարի առաջարկը՝ համայնքի ավագանին որոշում է թույլատրել համայնքի ղեկավարին.

Վարդենիս համայնքի 2024թ. համար հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1. Հիմք ընդունելով Վարդենիսի համայնքապետարանի և <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ի միջև կնքված 20.09.2016թ և ներդրումներ կատարելու ԳՄՎՀ -24/05 և ԳՄՎՀ-24/05-01 պայմանագրերը, թույլատրել համայնքի ղեկավարին համայնքի պահուստային ֆոնդից 4639/այլ ընթացիկ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածով <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ին հատկացնելու 1 426 967 դրամ դրամաշնորհային վճար:

2. Ամանորյա միջոցառումներ կազմակերպելու՝ Վարդենիս համայնքը տոնական զարդարելու նպատակով թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի պահուստային ֆոնդից հատկացնելու 14 000 000 դրամ:

Հարցը ներկայացրեց համայնքի ղեկավարը՝ նշելով, որ հիմք ընդունելով Վարդենիսի համայնքի մասնակցությամբ առևտրային կազմակերպություն ստեղծելու մասին 22 օգոստոսի 2016 թվականի N 51-Ա որոշումը, Վարդենիս համայնքի տարածքում աղբահանության աշխատանքների բարելավման, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերի կոշտ թափոնների կառավարման ծրագրի (հետագա տեքստում՝ «Ծրագիր») շրջանակներում Հայաստանի Հանրապետության և Վերակառուցման և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված վարկային համաձայնագրի 5.01 բաժնի «d» կետի,

ինչպես նաև՝ Աբովյանի, Բյուրեղավանի, Ճամբարակի, Չարենցավանի, Գավառի, Հրազդանի, Նոր Հաճնի, Մարտունու, Սևանի, Ծաղկաձորի, Վարդենիսի, Եղվարդի քաղաքապետարանների և Զարգացման Եվրոպական Բանկի միջև 05.04.2016 թվականին կնքված՝ Ծրագրի իրականացման և աջակցության համաձայնագրով նախատեսված և <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ի միջև կնքված 20.09.2016թ և ներդրումներ կատարելու ԳՄՎՀ -24/05 և ԳՄՎՀ-24/05-01 պայմանագրերը, Վարդենիս համայնքի իրավունքների իրականացման ու պարտավորությունների կատարումն ապահովելու և «ԿՈՏԱՅՔԻ ԵՎ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԿԿԹԿ» ֆիրմային անվանմամբ սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության համաձայնագրով նախատեսված պարտավորությունները կատարելու նպատակով առաջարկում եմ տալ Ձեր համաձայնությունը 3 փետրվարի 2024 թվականի N 4-Ն որոշմամբ 2024 թվականի համար հաստատված բյուջեում կատարել փոփոխություն. համայնքի պահուստային ֆոնդից 4639/այլ ընթացիկ դրամաշնորհներ/ տնտեսագիտական հոդվածով <<Կոտայքի և Գեղարքունիքի ԿԿԹԿ>> ՍՊԸ-ին հատկացնելու ընդհանուր առմամբ 1 միլիոն 426 հազար 967 դրամ դրամաշնորհային վճար:

Երկրորդ կետով առաջարկում եմ ամանորյա միջոցառումներ կազմակերպելու՝ Վարդենիս քաղաքը տոնական զարդարելու նպատակով տալ Ձեր թույլատվությունը համայնքի ղեկավարին համայնքի պահուստային ֆոնդից հատկացնելու 10 միլիոն դրամ:

Ելույթով հանդես եկավ ավագանու անդամ Կարեն Մկրտչյանը առաջարկելով ամանորյա միջոցառումներ կազմակերպելու՝ Վարդենիս համայնքում տոնական զարդարելու նպատակով թույլատրել համայնքի ղեկավարին՝ համայնքի պահուստային ֆոնդից հատկացնելու 14 000 000 դրամ:

Հարցի կետերի վերաբերյալ առարկություններ կամ առաջարկություններ չեղան, քվեարկության արդյունքում 20 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Քվեարկությանը ավագանու անդամ Վարդան Մարգարյանը:

Կողմ-21 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 146-Ա/

Լսեցին

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

/Զեկ. ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 17-րդ հոդվածի դրույթներով՝ համայնքի ավագանին որոշում է.

Հաստատել՝ 2024 թվականի հոկտեմբերի 23-ին, ժամը 14:00-ին կայանալիք Վարդենիս համայնքի ավագանու հերթական նիստի օրակարգը՝ բաղկացած 18 հարցից.

**1.ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ
ՀԱՄԱՅՆՔԻ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ N 4-Ն ՈՐՈՇՄԱՄԲ 2024 ԹՎԱԿԱՆԻ**

2. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԻՆՆ ԱՄԻՍՆԵՐԻ ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
3. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 13 ՓԵՏՐՎԱՐԻ 2024Թ.-Ի “ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ /ՀՈԱԿ-ՆԵՐ/ ԵՎ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ԹՎԱՔԱՆԱԿԸ, ՀԱՍՏԻՔԱՅՈՒՑԱԿԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱՅԻՆ ԴՐՈՒՅՔԱԶԱՓԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ,, N 6-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՅՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
4. ԱՄՆ ՄԶԳ ՖԻՆԱՍԱՎՈՐՄԱՄԲ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՅՎՈՂ ՓՈՔՐ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ
5. ՎԱՐԴԵՆԻՍ ՀՀ ԵՎԱ _ՇԻՆ 2009>> ՍՊ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ԳՅՈՒՂ ԱԿՈՒՆՔ 1 ՀՈՂԱՄԱՍԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ, ՎԱՐՁԱՎՃԱՐԻ ԳԻՆ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՅՄԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՈՐՈՇԱԿԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
6. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԵՎ ՍՈԹՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՀՈՂԱՄԱՍԵՐԸ ԱՃՈՒՐԴ-ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
7. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՓԱՄՔԱԿ ԵՎ ԴԱՐԱՆԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԸ ՄՐՅՈՒՅԹԱՅԻՆ ԿԱՐԳՈՎ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՄԵԿՆԱՐԿԱՅԻՆ ԳԻՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
8. <<ՏԵԼԵԿՈՄ ԱՐՄԵՆԻԱ>> ԲԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՅՈՂ ՓՈՔՐ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՁԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ 05-092-0013-0016 ԾԱԾԿԱԳՐՈՎ 0,1 ՀԱ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԱՅԼ ՀՈՂԵՐ>> ՀՈՂԱՄԱՍԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԷՆԵՐԳԵՏԻԿԱՅԻ, ԿԱՊԻ, ՏՐԱՆՍՊՈՐՏԻ՝ ԿՈՄՈՒՆԱԼ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ <<ԿԱՊԻ ՀՈՂԵՐ>> ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ
9. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԿՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐՏԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
10. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱԶԱՂԲՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՌԵՓՈՒԿ ՄԻԽԹԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
11. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԾՈՎԱԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՍՈՒՍԱՆՆԱ ՍԻՐԱԿԱՆՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
12. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԵԾ ՄԱՍՐԻԿ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԱՐԱՄ ԽԼՈՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ MERCEDES-BENZ S550 01NX044 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ

13. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՈՍԿԱՆ ԺԱՄՀԱՐՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
14. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԶԱՆ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ԳԱԳԻԿ ԱՐՐԱՀԱՄՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ VAZ 21_3 ՄԱԿՆԻՇԻ 35LS538 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
15. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂՔՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՐԴԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
16. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԽԱՉԱՂՔՅՈՒՐ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԲՆԱԿԻՉ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ ԿԻՐԱԿՈՍՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ՄԱՍՈՎ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
17. ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ՔՆԱՐԻԿ ԲԱԴԵՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ INFINITI FX 35 3.5 11GA112 ՊԵՏՀԱՄԱՐԱՆԻՇԻ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՅԻ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԿՈՒՏԱԿՎԱԾ ԱՊԱՌՔԸ ՕՐԵՆՔՈՎ ՍԱՀՄԱՆՎԱԾ ԿԱՐԳՈՎ ՄԱՍՆԱԿԻ ԶԻՋԵԼՈՒ ՄԱՍԻՆ
18. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ԵՎ ԴՐԱՄԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ
19. ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՐՓՈՒՆՔ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ԿՐԹԱՀԱՄԱԼԻՐԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԵՎ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽՆԱԿԱՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Մինչ նիստի օրակարգը ներկայացնելը ելույթով հանդես եկավ համայնքի ղեկավարը:

Հարգելի՛ ավագանու անդամներ, սիրելի վարդենիսցիներ

Մեծ ուրախությամբ պետք է նշեմ, որ մեր համաքաղաքացի Հայկ Խլոյանը՝ Ալբանիայի Տիրանա քաղաքում ընթացող ըմբշամարտի աշխարհի մինչև 23 տարեկանների առաջնությունում 11:6 հաշվով առավելության անցնելով բելառուսի մարզիկի նկատմամբ, դարձել է աշխարհի չեմպիոն, ինչի կապակցությամբ շնորհավորում եմ բոլորիս այս պատմական հաղթանակի կապակցությամբ և մեր մարզիկին ցանկանում եմ նորանոր նվաճումներ:

Մինչև ավագանու նիստի օրակարգի հարցերին անդրադառնալը, ուզում եմ ձեզ և մեր բնակչությանը տեղեկատվություն տրամադրել՝ Վարդենիս համայնքում կատարված շինարարական աշխատանքների մասին:

Ավարտին են մոտենում Վարդենիս քաղաքի Գայի փողոցի ասֆալտապատման աշխատանքները: Շինարարությունը իրականացվում է սուբվենցիոն ծրագրի միջոցով, որի ընդհանուր բյուջեն կազմում է 679 միլիոն 433 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 339 միլիոն 716 հազար դրամ, նույն չափի է նաև ՀՀ Կառավարության մասնաբաժինը: Գայի փողոցը ոչ միայն Վարդենիս քաղաքի գլխավոր փողոցներից մեկն է, այլև ունի ռազմավարական նշանակություն:

Հայարտորեն կարող եմ նշել, որ Գայի փողոցի ասֆալտապատումը եղել է իմ նախընտրական ծրագրում, որը կյանքի եմ կոչել:

Վարդենիս համայնքի Բանդեր թաղամասի կոյուղագծի և դրենաժային համակարգի բացակայությունը տասնամյակներ շարունակ եղել է մի շարք թեկնածուների նախընտրական խոստում, սակայն այդպես էլ չի կատարվել: Մնալով խոստմանս հավատարիմ այս ծրագիրը ևս կյանքի եմ կոչել: Այժմ Բանդեր թաղամասն ունի կոյուղի և դրենաժային համակարգ: Սուբվենցիոն ծրագրով իրականացվող շինարարական աշխատանքների ընդհանուր արժեքը կազմում է 223 միլիոն 801 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը կազմում է 67 միլիոն 140 հազար դրամ, իսկ 156 միլիոն 661 հազար դրամը ՀՀ Կառավարության ներդրումն է:

Արդեն ավարտվել են Վարդենիս քաղաքի 6 բազմաբնակարան շենքերի տանիքների հիմնանորոգման աշխատանքները, ևս չորսինը շուտով կմեկնարկեն: 6 բազմաբնակարան շենքերի տանիքների շինարարության ընդհանուր արժեքը կազմում է 102 միլիոն 394 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը 51 միլիոն 197 հազար դրամ է, նույն չափի է նաև ՀՀ Կառավարության ներդրումը: Իսկ մնացած բազմաբնակարան շենքերի տանիքների համար արդեն հայտարարվել է նախագծա-նախահաշվային փաստաթղթերի ձեռքբերման մրցույթ և 2025 թվականի ավարտին Վարդենիս քաղաքի բոլոր բազմաբնակարան շենքերի տանիքները կլինեն հիմնանորոգված:

Ավարտվել է Մաքենիս բնակավայրի ոռոգման ցանցի կառուցումը: Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 74 միլիոն 302 հազար դրամ, որից համայնքի մասնաբաժինը՝ 22 միլիոն 290 հազար դրամ է, իսկ ՀՀ Կառավարության ներդրումը կազմում է 52 միլիոն 11 հազար դրամ:

Ընթացքի մեջ են Ծովակ, Գեղամասար, Արեգունի, Խաչաղբյուր, Սոթք եւ Փամբակ բնակավայրերի լուսավորության ցանցի կառուցման աշխատանքները:

Սուբվենցիոն ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 56 միլիոն 582 հազար դրամ, որից համայնքի ներդրումը 16 միլիոն 974 հազար դրամ է, իսկ ՀՀ Կառավարության ներդրումը կազմում է 39 միլիոն 607 հազար դրամ:

Այժմ անդրադառնամ Վարդենիս քաղաքի բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքներին: Արդեն ավարտվել են 4 բազմաբնակարան շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքները, որը իմ կարծիքով ամենակարևոր աշխատանքներից էր մեր բնակիչների տեղաշարժի հարմարավետության տեսանկյունից: Բանավան թաղամասում կատարվել են 2 բազմաբնակարան շենքերի ասֆալտապատման աշխատանքներ, որոնց որակը՝ չի համապատասխանել ասֆալտապատման նորմերին, այդ իսկ պատճառով նշված բակերի ասֆալտապատման աշխատանքները չեն ընդունել, կընդունեն միայն առկա թերացումները վերացնելուց հետո:

Ուզում եմ հիասթափեցնել բամբասանքնրով ու մտացածին շահարկումներով զբաղվողներին, քանի որ Վարդենիս համայնքում իմ օրոք չի եղել շինարարություն, որը ընդունեմ առանց համապատասխան որակի և ըստ պահանջված նորմերի:

Քանի որ դեռևս ՀՀ Կառավարության բնապահպանական մասհանումների ոչ բոլոր ծրագրերն են ավարտված, այդ պատճառով նշված ծրագրերի մասին ամփոփ տեղեկատվություն կներկայացնեմ հաջորդ ավագանու նիստի ժամանակ:

Շնորհակալություն եմ հայտնում ՀՀ Կառավարությանը եւ Գեղարքունիքի մարզպետ Կ. Սարգսյանին՝ նման մեծածավալ ծրագրերի իրականացման եւ աջակցության համար:

2024թ. հոկտեմբերի 23-ին, ժամը 14:00-ին նշանակված ավագանու հերթական նիստը համարեց բացված: Նիստին ներկա են համայնքի ավագանու 27 անդամներից 23-ը: Քվորումն ապահովված է: Նիստը իրավազոր է:

Համայնքի ղեկավարը ներկայացրեց նիստի օրակարգը՝ բաղկացած 18 հարցից:

Համայնքի ղեկավարը ընթերցեց օրակարգում ընդգրկված հարցերը՝ ըստ հերթականության:

Համայնքի ղեկավարը իր խոսքում նշեց, որ անհրաժեշտությունից ելնելով օրակարգում կատարել փոփոխություն և ընդգրկել ևս մեկ հարց, որը վերաբերվում է Արփունք բնակավայրի կրթահամալիրի կառուցմանը: Քանի որ կրթահամալիրի կառուցման ժամկետները սեղմ են, ուստի անհրաժեշտ համարեց ավելացնել օրակարգում:

Առաջարկեց հաստատել օրակարգը՝ բաղկացած 19 հարցից և հայտարարեց քվեարկություն:

Քվեարկության արդյունքում 22 կողմ 0 դեմ 0 ձեռնպահ ձայների հարաբերակցությամբ հարցն ընդունվեց:

Քվեարկությունից հետո նիստերի դադարից դուրս է եկել ավագանու անդամ Արմինե Աղաջանյանը և չի մասնակցել մնացած հարցերի քննարկմանը:

Կողմ-22 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145-Ա/

Ավագանու անդամներ
ԱՐՄԻՆԵ ԱՂԱԶԱՆՅԱՆ

ԱՐՈՒՍՅԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՎԱՐՈՒԺԱՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԱՄԼԵՏ ԲԱԶՈՅԱՆ

ԱՇՈՏ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԿ ԵՐԱՆՈՍՅԱՆ

ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ԱՇՈՏ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՆԵԼԼԻ ԽԱԶԱՏՐՅԱՆ

ՌԱՖԱՅԵԼ ԽԶԵՅԱՆ

ԱՐԱՔՍՅԱ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ՍՊԱՐՏԱԿ ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԱԹԵՎՈՍՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԱՆՈՒԶԱՐՅԱՆ

ՎԱՐԴԱՆ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՍԱԹԵՆԻԿ ՄԻՆԱՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՄԿՐՏՉՅԱՆ

ՄՈՒՇԵՂ ՇԱԲՈՅԱՆ

ԴԱՎԻԹ ՇԱՀՆԱԶԱՐՅԱՆ

ԶԱՎԵՆ ՇՀՈՅԱՆ

ՌՈՄԵԼՅԱ ՍԱՐԳՍՅԱՆ

ԿԱՐԵՆ ՍԻՄՈՆՅԱՆ

ՍԵՎԱԿ ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ԱՀԱՐՈՆ ԽԱԶԱՏՐՅԱՆ

Նիստին արձանագրեց՝

Կամո Զարոյանը

